



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2018 թվականի գնումների պլանի մոնիթորինգի  
արդյունքների վերաբերյալ**

**ԵՐԵՎԱՆ 2018**

## Բովանդակություն

Նախաբան .....	3
1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2018 թվականի գնումների պլանի կառուցվածքը .....	4
2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2018 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները .....	6
Հղումներ.....	6

## Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2018 թվականի աշխատանքային ծրագրի (այսուհետև՝ Որոշում 1) 12-րդ կետի և արտացոլում է հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշման (այսուհետև՝ Որոշում 2) №1 հավելվածով հաստատված ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների կողմից կազմված և հրապարակված գնումների պլանի համապատասխանության գնահատումը հանձնաժողովի Որոշում 2-ով սահմանված լրացուցիչ պահանջներին:

Հանրային կազմակերպության գնումների պլանի մոնիթորինգը ներառում է հանրային կազմակերպությունների կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատումը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) 2018 թվականի տարեկան հաստատված բյուջեի (միայն լիցենզավորված գործունեության մասով) հիման վրա կազմված և հանձնաժողով ներկայացված գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում:

## 1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2018 թվականի գնումների պլանի կառուցվածքը

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն՝ համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի Որոշում 2-ով սահմանված լրացուցիչ պահանջների ընկերության պաշտոնական կայքում և ֆինանսների նախարարության գնումների տեղեկագրում հրապարակել է 2018 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված գնումների պլանը:

Ընկերության գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում ամփոփվել են հրապարակված տվյալները, համաձայն որոնց ընկերությունը 2018 թվականին պլանավորել է իրականացնել 8 849,0 մլն դրամի (ներառյալ ԱԱՀ) գնում, որի վերաբերյալ տվյալներն ըստ գնման առարկայի ներկայացված են աղյուսակ 1-ում:


Աղյուսակ 1

	Գնման առարկան	Գնումների պլանային արժեքը մլն դրամ (ներառյալ ԱԱՀ)	Գնման ուղղության մասնաբաժինը ընդհանուր գնումներում
1	2	3	4
1	Աշխատանք	2 899,2	33%
2	Ապրանք	5 949,8	67%
	<b>Ընդամենը</b>	<b>8 849,0</b>	<b>100%</b>


Ըստ գնման ընթացակարգերի պլանավորված գործարքների վերաբերյալ տվյալներն ամփոփված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

№	Գնման ընթացակարգը	Պլանավորված գնումների քանակը (հատ)	Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (քանակային)	Գնումների սկզբնական պլանավորված արժեքը, մլն դրամ (ներառյալ ԱԱՀ)	Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (գումարային)	Գնման գործընթացի մեկնարկի ժամկետները (2018թ.)
1	2	3	4	5	6	7
1	Միակ մատակարար	8	7%	244,97	3%	հունվար 2018 դեկտեմբեր 2018
2	Բաց առաջարկների հարցում	112	93%	8 604,01	97%	հունվար 2018 դեկտեմբեր 2018
	<b>Ընդամենը</b>	<b>120</b>	<b>100%</b>	<b>8 849,0</b>	<b>100%</b>	



Սկար 1. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (քանակային)



Սկար 2. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (գումարային)

## 2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2018 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները

Ընկերության գնումների պլանի մոնիթորինգի արդյունքներից կարելի է փաստել, որ.

1. գնումների պլանն ընկերության պաշտոնական կայքում և ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 2018 թվականի փետրվարի 16-ին, ինչը չի բխում հանձնաժողովի Որոշում 2-ի պահանջներից:
2. ընկերությունը գնումների պլանը կազմել է պատշաճ մակարդակով:

### Հղումներ

- Որոշում 1. Հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» №540Լ որոշում,
- Որոշում 2. Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի «Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու, այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջներ սահմանելու և Հայաստանի հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №391Ա որոշում: